Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2020 թ. բյուջեի վարչական և ֆոնդային մասերում փոփոխություններ կատարելու մասին

Համաձայն ՀՀ Արարատի մարզպետի 16.06.2020թ. թիվ 01/05764-20 գրության, կորոնավիրուսի հիվանդությամբ պայմանավորված համայնքի ինքնամեկուսացած թվով 65 բնակիչների անհրաժեշտ է տրամադրել սոցիալական աջակցություն սննդի և հիգիենիկ պարագաների համար, մեկ բնակչի հաշվով 5634.68դրամ 14 օրվա համար: Աջակցությունն իրականացնելու համար համայնքին տրամադրվելու է ընթացիկ դրամաշնորհ պետական բյուջեից 366254 դրամի չափով: Աջակցության կարիք ունեցող ընտանիքներին օժանդակությունը ժամանակին հասցնելու նպատակով համայնքային միջոցներից ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների հատուկ նպատակային այլ հոդվածին անհրաժեշտ է վարչական բյուջեի պահուստային ֆոնդից լրացուցիչ հատկացնել 250.0 հազար դրամ:

Նախատեսվում է քաղաքապետարանի աշխատակազմի հայեցողական պաշտոնների ցանկում ավելացնել օգնականի հաստիք՝ 160000 դրամ ամսեկան դրույքաչափով, որի համար անհրաժեշտ է աշխատավարձի ֆոնդը 2020թվականի համար ավելացնել 900000դրամի չափով:

Քաղաքապետարանի ծառայողական ավտոմեքենան մշտապես մաքուր պահելու համար անհրաժեշտ է ունենալ պայմանագիր որևէ ավտոլվացման սպասարկման կետի հետ, որի համար կարիք կլինի ամսեկան վճարել առնվազն 16000 դրամ: ՈՒստի նախատեսվում է բյուջեից հատկացնել 90000դրամ մինչև տարեվերջ ծառայությունն ստանալու համար:

Քաղաքապետարանի դիմացի այգու նստարանների ընթացիկ նորոգման, փայտյա մասերի փայտամշակման աշխատանքների համար անհրաժեշտ է բյուջեից հատկացնել 960000 դրամ:

Ոռոգման համակարգի համար բյուջեում նախատեսված 4250.0 հազար դրամ կապիտալ դրամաշնորհից շին աշխատանքների մրցույթի արդյունքում առաջացել է տնտեսում 1987.7 հազար դրամ:

Առաջարկվում է 2020 թվականի բյուջեի վարչական մասի եկամուտները ընթացիկ դրամաշնորհների մասով ավելացնել 366254 դրամով, ոռոգման համակարգի կապիտալ դրամաշնորհների մասով նվազեցնել 1950.0 հազար դրամ և ընդհանուր միջոցները ուղղել վերոնշյալ ծախսերին:

Համայնքի 2020 թվականի բյուջեի ֆոնդային մասում առաջարկվում է նախատեսել միջոցներ 2021 թվականի կապիտալ աշխատանքների փորձաքննություն անցած նախագծա-նախահաշվային փաթեթներ ձեռք բերելու համար, մասնավորապես՝

1. Մասիս քաղաքի նոր թաղամասի 38 շենքից ոստիկանություն տանող ճանապարհի և մայթերի կառուցման համար 1848.0 հազար դրամ.
2. Մասիս Կայարանի 17 և 19 շենքերի բակ մտնող ճանապարհային հատվածի հիմնանորոգման համար 330.0 հազար դրամ.
3. Հերացի և Հարապետության փողոցների խաչմերուկից մինչև 1-ին փողոց ճանապարհային հատվածի հիմնանորոգման համար 2178.0 հազար դրամ.
4. Նոր թաղամասի 3,4,5 շենքերի բակերի բարեկարգման համար 330.0 հազար դրամ.
5. Նոր թաղամասի 1-ին շենքի տանիքի հիմնանորոգման համար 687.5 հազար դրամ.
6. Թիվ 12 հանրակացարանի 39 մասնաշենքի տանիքի հիմնանորոգման համար 462.0 հազար դրամ.
7. Թիվ 12 հանրակացարանի 40 մասնաշենքի Հերացու փողոցին հարող դիմային մասի երեսապատման համար 440.0 հազար դրամ
8. Բազմաբնակարան շենքերի բակերի խաղահրապարակների հիմնանորոգման համար 440.0 հազար դրամ.
9. Նոր հողերի 1-ից 7-րդ թաղամասերի ջրագծի և կոյուղագծերի կառուցման համար 3300.0 հազար դրամ.
10. Հերացի և Հարապետության փողոցների խաչմերուկից մինչև 1-ին փողոց ճանապարհային հատվածի ջրահեռացման համակարգի հիմնանորոգման համար 1650.0 հազար դրամ.
11. Մասիս Կայարանի թիվ 17 շենքի բակում մինի ֆուտբոլի դաշտի կառուցման համար 660.0 հազար դրամ.
12. Թիվ 4 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման համար 1100.0 հազար դրամ.

Ընդհանուր նախագծա- նախահաշվային աշխատանքներ ձեռք բերելու համար անհրաժեշտ է 13425.5 հազար դրամ:

Համայնք-բնակիչ կապը ավելի նպատակային և արդյունավետ դարձնելու, համայնքի խնդիրները մեկ հարթակում տեսնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել ծրագրային փաթեթ, որի համար առաջարկվում է բյուջեից հատկացնել 2000.0հազար դրամ:

Հաշվի առնելով , որ LED լուսատուներով քաղաքի արտաքին լուսավորումը անհամեմատ էներգախնայող է, անհրաժեշտ է քաղաքում առկա լուսավորման ցանցի շիկացման լամպերը փոխարինել LED լուսատուներով, որի համար անհրաժեշտ է ձեռք բերել 165 հատ լուսատուներ , ընդհանուր 5600.0 հազար դրամ արժեքով:

Մասիս քաղաքում և Մասիս Կայարանի թաղամասում լրացուցիչ աղբամաններ տեղադրելու համար կարիք կա ձեռք բերելու 18 հատ աղբամաններ, որի համար անհրաժեշտ է բյուջեից հատկացնել 2970.0 հազար դրամ:

Թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի 2 խմբասենյակների հիմնանորոգումից հետո մանկապարտեզն անհրաժեշտ է համալրել նոր գույքով , որի համար անհրաժեշտ է 4588.0 հազար դրամ:

Վերոնշյալ կապիտալ ծախսերն իրականացնելու համար ընդհանուր անհրաժեշտ է բյուջեից հատկացնել 28583.5 հազար դրամ, որն առաջարկվում է հատկացնել ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների վարչական սարքավորումների ձեռք բերման հոդվածից:

Աշխատակազմի ղեկավար Կ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ Ն. Սահակյան